

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Սարգսյան Մաքսիմ Լիպարիտի

ԻՉՈՏՐՈԴ ԵՎ ԱՆԻՉՈՏՐՈԴ ՄԻՋԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ  
ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՕՊՏԻԿԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

Ա.04.21 «Լազերային ֆիզիկա» մասնագիտությամբ  
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

Երևան – 2023

---

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РА  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

Саргсян Максим Липаритович

ИССЛЕДОВАНИЕ МЕХАНИЧЕСКИХ И ОПТИЧЕСКИХ СВОЙСТВ СТРУКТУР,  
СФОРМИРОВАННЫХ В ИЗОТРОПНЫХ И АНИЗОТРОПНЫХ СРЕДАХ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата  
физико-математических наук по специальности  
01.04.21 – “Лазерная физика”

ЕРЕВАН – 2023

Աստենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական դեկան՝ ֆիզ.-մաթ. գիտ.դոկտոր,  
պրոֆեսոր **Ռ.Ս. Հակոբյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ <<ԳԱԱ թղթ. անդ., ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր,  
պրոֆեսոր **Ա.Հ. Մելիքյան**  
Ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր,  
պրոֆեսոր **Է.Պ. Կոկանյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Հայաստանի ազգային պոլիտեխնիկական  
համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2023 թ. նոյեմբերի 25-ին ժամը 12:00-ին Երևանի պետական համալսարանում գործող Ֆիզիկայի 049 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0025 Երևան, Ալեք Մանուկյան 1):

Աստենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:  
Մեղմագիրն առաքված է 2023 թ. հոկտեմբերի 25-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար՝

ֆ.-մ.գ.թ., դոցենտ  
**Վ.Պ. Քալանթարյան**

---

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете.

Научный руководитель: д.ф.м.н., профессор  
**Р.С. Акопян**

Официальные оппоненты: Чл.-корр. НАН РА, д.ф.м.н.,  
профессор **Ա. Օ. Մելիքյան**  
д.ф.м.н., профессор **Է. Պ. Կոկանյան**

Ведущая организация: **Национальный политехнический университет  
Армении**

Защита диссертации состоится 25 ноября 2023 г. в 12:00, на заседании специализированного совета 049 по физике Ереванского государственного университета по адресу: 0025, Ереван, ул. А. Манукяна 1.

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.  
Автореферат разослан 25 октября 2023 г.

Ученый секретарь  
специализированного совета:

к. ф.м.н., доцент  
**Վ.Պ. Կալանթարյան**

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### Աշխատանքի արդիականությունը

Ժամանակակից ֆոտոնիկայի բնագավառում իրականացվող հետազոտությունների հիմնական շարժադրիններից է մի շարք կիրառություններում էլեկտրոնիկայի՝ ֆոտոնիկայով փոխարինման հետանկարը: Գործնական կիրառությունների տեսանկյունից, սակայն, ֆոտոնիկայի վրա հիմնված համակարգերը դեռևս ունեն մրցակցային թերություններ: Հիմնական խնդիրները, որոնք շարունակում են սահմանափակել արդյունաբերական լայն կիրառությունները, պայմանավորված են նրանով, որ նշված համակարգերում լուսային փնջերի բնութագրերի արդյունավետ դեկավարման գործիքները քիչ են: Այս գործիքների աշխատանքի հիմքում սովորաբար ընկած է լուսի ամպիլտուդի, փուլի և քևեռացման կառավարում: Փուլի միջոցով լուսային փնջերի դեկավարման ավանդական մեթոդները հիմնված են օպտիկական ճանապարհների երկարությունների փոփոխման միջոցով փուլի կառավարման վրա: Իզոտրոպ միջավայրերում ալիքային ճակատի կառավարման նշված եղանակը հաճախ իրականացվում է հետևյալ մոտեցումների կիրառմամբ՝<sup>1)</sup> 1) նյութի հաստության՝ տրված պրոֆիլով տեղային փոփոխմամբ; 2) միջավայրի ծավալում բեկման ցուցիչի բաշխվածության (նախօրոք տրված պրոֆիլով) տեղային փոփոխմամբ:

Առաջին եղանակով փուլային օպտիկական բաղադրիչների պատրաստումը, մասնավորապես, լազերային փնջերի տարածական բաշխվածության ձևավորման նպատակով, կարող է պահանջել մակերևութային բարդ, երեսմն՝ շատ նույր կառուցվածքների ստացում: Այսպիսի կառուցվածքները շատ օգայուն են արտաքին (քերմային, թիմիական, և այլ) ազդեցությունների նկատմամբ, ինչը օգալիորեն սահմանափակում է դրանց կիրառությունների շրջանակը: Երկրորդ մոտեցման կիրառմամբ, մինչդեռ, հնարավոր է տրված փուլային բաշխվածությամբ օպտիկական տարրեր պատրաստել բարձր վնասման շեմ ունեցող թափանցիկ նյութերի ծավալում: Այսպիսի բաղադրիչները կարող են հրատապ և հեռանկարային կիրառություններ ունենալ բարձր հզրային օպտիկայում և կիրառման միջավայրի շատ ավելի խստ ֆիզիկական պայմաններում: Այս առողմով, հասուն հետաքրքրություն են ներկայացնում սիլիկատային ապակիները (հեղուկ քվարց, բրուսիկատային (N-BK7) և այլ) հաշվի առնելով օպտիկական և օպտիկա-մանրաբեկային տեխնիկայում այդ նյութերի լայն տարածվածությունը:

Չնայած վերոնշյալ առավելություններին, 3D ծավալային օպտիկական տարրերի պատրաստումը շարունակում է մարտահրավեր մնալ: Դրա հետ մեկտեղ, ինտեգրման բարձր աստիճանի և չափերի փոքրացման նկատմամբ աճող պահանջարկը խթանում է մշակման այնպիսի եղանակների հետազոտության ու ստեղծումը, որոնք կապահովեն միկրո- և նանո-մասսատարներում գերբարձր լուծաչափ, նյութերի լայն ընտրություն, կառուցման դիզայնի առումով՝ ճկունություն և տեխնոլոգիական այլ արոցեսների հետ համատեղելիություն: Միկրոմշակման լազերային ուղղակի գրանցման (ԼՈՒԳ) մեթոդն ունի վերը նշված պահանջները բավարարելու պոտենցիալը, և ներկայում դրա՝ որպես միկրո- և նանոկառուցման գործիքի կիրառությունների շրջանակը արագ տեսմափերով ընդլայնվում է [1, 2]: Սա մեծապես պայմանավորված է նորագույն տեխնոլոգիական մշակումներով, որոնց արդյունքում հասանելի են դար-

ձել բազմաթիվ տեխնոլոգիական պարամետրերի դեկավարելիությամբ ճկուն, գերարագ լազերային միկրոմշակման համակարգեր:

Այսպիսի համակարգերի կիրառմամբ միկրո- և նանո-մակարդակներում ապակի-ների մշակման պրոցեսի դեկավարելիությունը սկզբունքորեն հնարավորություն է տախոս հաղթահարել պահանջվող հատկություններով ծավալային կառուցվածքների պատրաստման հետ կապված խոչընդոտներ, որոնք բխում են տվյալ նյութի հետ լազերի փոփագդեցության առանձնահատկություններից և երեմն հիմնարար բնույթի են: Դա առաջին հերթին վերաբերում է լազերով մակածված բեկման ցուցչի փոփոխության (ԲՑՓ) արժեքներին, որոնք ապակիների դեպքում շատ փոքր են՝ ( $\Delta n \approx 10^{-4} \dots 10^{-2}$ ): Հետևաբար, լուսի փուլի էական փոփոխություններ ստանալու համար անհրաժեշտ է պատրաստել մեծ տարածական չափերով կառուցվածքներ: Ծավալային էլեմենտների պատրաստման տեսանկյունից մեթոդի կիրառման համար սահմանափակումներ են մուցնում նաև մշակող լազերային փնչի (վերափոխված տիրույթի) տարածական անհամասեռությունը, ինչպես նաև որոշակի խորության դեպքում սփերիկ աբերացիաների գգայի ազդեցությունը: Նշված խոչընդոտների հաղթահարումը պահանջում է ՀՈՒԳ առանձնահատուկ մուտցումներ և տեխնոլոգիական լուծումներ, ինչը և ատենախոսության առաջին գլխում նկարագրված հետազոտությունների առարկան է:

Ի տարբերություն իզոտրոպ միջավայրերի, անիզոտրոպ միջավայրերում ձևավորված կառուցվածքները հնարավորություն են տախոս լուսային փնչերը դեկավարել երկրեկման և երկրաչափական փուլի մոդուլման եղանակներով: Երկրաչափական փուլի կառավարման վրա հիմնված օպտիկական տարրերը նոր սերնդի օպտիկական տարրեր են, որոնց պատրաստման հնարավորությունը ցուցադրվել է հեղուկ բյուրեղներում [3], թափանցիկ նյութերում ՀՈՒԳ մեթոդի կիրառմամբ (օգտագործելով ատենախոսության մեջ նկարագրված երկրորդ տիպի վերափոխությունները) [1], ինչպես նաև մետամակերևույթների կիրառմամբ [4]: Նշված մեթոդի հիման վրա աշխատող օպտիկական տարրերը հաճախ անվանում են դիֆրակտույթին ալիքաթթեղներ (ԴԱ): Հեղուկբյուրեղային էլաստոմերները (ՀԲԷ), շնորհիվ իրենց հատկությունների (արտաքին դաշտերով դեկավարելի օպտիկական անիզոտրոպության, ուղղորդի բաշխման ծրագրավորման հնարավորության), հետաքրքրական միջավայրեր են դեկավարելի բնութագրերով ԴԱ-ներ պատրաստելու համար: Դրանք հնարավորություն են տախոս ստանալ լրացուցիչ երանակներով դեկավարելի (օրինակ՝ մեխանիկական եղանակով, շերմաստիճանը փոփոխելով) ալիքաթթեղներ:

Կարևոր է նշել, որ ՀՈՒԳ մեթոդի կիրառմամբ պատրաստված լուսային փնչերի դեկավարման տարրերը և ՀԲԷ-ների հիման վրա պատրաստվող, մեխանիկական եղանակով կառավարվող օպտիկական տարրերը իրար հետ կապված են: Դրանք երկուսն էլ, ի վերջո, իրենցից ներկայացնում են դեֆորմացիաների ազդեցությունը օպտիկական հատկությունների վրա: Մասնավորապես, մի կողմից ունենք ապակիների ծավալում վերափոխություններ, որոնց դեպքում լազերով մակածված ծավալի տեղային փոփոխությունները հանգեցնում են պերմանենտ դեֆորմացիաների: Մյուս կողմից էլ ՀԲԷ-ների հիման վրա պատրաստվող, մեխանիկական եղանակով կառավարվող ալիքաթթեղների դեպքում ունենք առաձգական դեֆորմացիաների ազդեցությունը:

յուն օպտիկական հատկությունների վրա: Նմանատիպ (հատկացիս մեխանիկական լարումներով ղեկավարելի) ալիքաթիթեղների պատրաստումը շարունակում է մարտահրավեր հանդիսանալ: Ի հյուս եկած հիմնական դժվարությունները հետևյալն են. 1) օպտիկական տարրեր պատրաստելու համար անհրաժեշտ հատկություններով էլաստոմերների սինթեզը դեռևս արդիական է և լրացուցիչ հետազոտությունների կարիք ունի; 2) ՀԲԷ-ների կառուցվածք-հատկություններ կապը դեռևս ամբողջովին պարզաբանված չէ: Մյուս կողմից, ՀԲԷ-ների 3D տպագրության տեխնոլոգիաների վերջին զարգացումներն այս նյութերի հիման վրա բարդ կառուցվածք ունեցող օպտիկական տարրեր պատրաստելու հնարավորություն են տալիս: Ուստի, ՀԲԷ-ների հիման վրա մեխանիկական եղանակով կառավարվող օպտիկական սարքերի նախագծման և պատրաստման տեսանկյունից չափազանց կարևոր է դառնում նշված նյութերի ամբողջական մեխանիկական բնութագրման իրականացումը: Տվյալ ատենախոսության երկրորդ գլուխն անդրադառնում է նշված հարցին:

Հետաքրքրական միջավայրեր են նաև անիզոտրոպ մեխանիկական և օպտիկական հատկություններով թափանցիկ փայտերը (ԹՓ): Այս նյութերը թափանցիկ փայտ-պոլիմեր կոմպոզիտներ են, որոնց օպտիկական կիրառությունների պոտենցիալը ցուցադրվել է մի շարք աշխատանքներում [5]: ԹՓ-երը համեմատարար նոր միջավայրեր են, ուստի դրանց օպտիկական և մեխանիկական հատկությունները դեռևս մանրամասն ուսումնասիրված և նկարագրված չեն: Երրորդ գլխի առաջին մասում, օգտագործելով լայնական իզոտրոպության ենթադրությունը, տեսականութեն նկարագրվել են ԹՓ-ի անիզոտրոպ մեխանիկական հատկությունները:

Կարևոր նշանակություն ունի դիտարկված միջավայրերի օպտիկական հատկությունների որոշումը: ԼՈՒԳ մեթոդի կիրառմամբ պատրաստված մակրոսկոպական կառուցվածքների օպտիկական բնութագրումը քննարկվել է տվյալ ատենախոսության առաջին գլխում: Ատենախոսության մեջ դիտարկված անիզոտրոպ միջավայրերի օպտիկական բնութագրումը Զոնսի մատրիցական մեթոդի կիրառմամբ քննարկված է երրորդ գլխի երկրորդ մասում:

## Ատենախոսության նպատակներ

- ❖ Բորոսիկատային ապակու ծավալում գերկարճ լազերային իմպուլսներով մակածված վերափոխությունների հետազոտումն ու կիրառումը թեկման ցուցիչ համասեռ փոփոխությամբ հոծ մակրոսկոպիկ փուլային կառուցվածքների ստացման նպատակով:
- ❖ Տեսական և փորձարարական եղանակներով մոնոդրմեն նեմատիկ հեղուկրյուրեղային էլաստոմերների անիզոտրոպ առածգական հատկությունների ամբողջական բնութագրումը:

## Գիտական նորույթը

Ատենախոսության շրջանակներում իրականացված աշխատանքի գիտական նորույթը ներկայացվում է առաջին անգամ կատարված տեսական և փորձարարական աշխատանքների հետևյալ շարքով՝

1. Փորձարարական եղանակով ցույց է տրվել, որ ուժիմների ճշգրիտ ընտրությամբ N-BK7 ապակու ծավալում հնարավոր է իրականացնել թեկման ցուցիչ հոծ և համասեռ ծևափոխմամբ եռաչափ միկրոկառուցվածքավորում: Հայտնաբերվել

Են շերտ-առ-շերտ լազերային գրանցման եղանակով N-BK7 ապակու ծավալում մեծ չափսերով ծավալային փուլային կառուցվածքների պատրաստման օպտիմալ տեխնոլոգիական ռեժիմներ:

2. Ցուց է տրվել, որ գերկարճ-իմպուսային լազերի ճշգրիտ սկանավորմամբ ապակու ծավալում մակրոսկոպիկ հոճ փուլային կառուցվածքների in situ պատրաստման հնարավորությունը կարող է կիրառվել որպես մակաձված բեկման ցուցի փոփոխության արժեքի և նշանի գնահատման արագ ու պարզ մեթոդ:
3. Տեսականորեն ցուց է տրվել, որ նեմատիկ հեղուկը լինելու հեղանական առաջարկական հատկությունները նկարագրվում են հինգ հաստատուններ պարունակող առաջարկական ազատ էներգիայի խտության միջոցով: Առաջարկվել են ծգման պարզ փորձեր նեմատիկ հեղուկը լինելու հեղանական առաջարկական բնութագրող նշված հինգ գործակիցները որոշելու համար:
4. Առաջարկվող տեսական մոդելի կիրառմամբ ազդենքնենով ֆունկցիոնալացված նեմատիկ հեղուկը լինելու հեղանական էլաստոմերների և ակրիլատային հիմքով օրսետիկ հեղուկը լինելու հեղանական էլաստոմերների համար առաջին անգամ որոշվել են առաջարկական ազատ էներգիայի խտության արտահայտության բոլոր հինգ գործակիցները:
5. Տեսականորեն ուսամնասիրվել են անհզուտրով թափանցիկ փայտի մեխանիկական հատկությունները: Բայսայի հիման վրա պատրաստված թափանցիկ փայտի նմուշի համար գնահատվել են առաջարկական ազատ էներգիայի խտության արտահայտության մեջ մտնող գործակիցներ:
6. Տեսականորեն ցուց է տրվել, որ նեմատիկ հեղուկ բյուրեղներում տարածականորեն անհամասեռ էլեկտրական դաշտի կիրառմամբ առաջացած ծավալի տեղային նվազումը կարող է հանգեցնել նյութի հոսքի:

### **Կիրառական նշանակությունն**

Այտենախոսության առաջին մասում հայտնաբերված և հետազոտված միկրոմշակման տեխնոլոգիական ռեժիմները կարող են անմիջականորեն կիրառվել բրոսիլիկատային ապակու ծավալում լազերային փնջերի ուղղորդման, տարածական պրոֆիլի փոխակերպման համար նախատեսված սարքեր (տիպ I և տիպ II ալիքատարներ, ֆուլուատորներ, փնջի ծևավորիչներ, դիֆրակտային ցանցեր) պատրաստելու համար: Ապակու ծավալում մեծ չափերով հոճ փուլային կառուցվածքների ստացումը հնարավորությունը է տախի կիրառել (տվյալ տեխնոլոգիական ռեժիմում) մակաձված ԲՖՆ նշանի և արժեքի գնահատման պարզ մեթոդ: Երկրորդ մասում ստացված արդյունքները կարող են օգտակար լինել անհզուտրով էլաստոմերների հիման վրա մեխանիկական եղանակով կառավարվող ալիքաթիթեղներ նախագծելու և պատրաստելու համար: Երկրորդ մասում ներառված արդյունքները կարող են նաև օգտակար լինել այդ միջավայրերի ֆիզիկական մոդելավորման և դրանց հիմքով այլ կիրառությունների համար նախատեսված մեխանիկական եղանակով դեկավարելի սարքերի պատրաստման տեսանկյունից:

### **Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները**

1. Սուբ-ակրովայրկանային լազերային իմպուլսներով N-BK7 ապակու ծավալում բեկման ցուցի ծևափոխման մակաձման՝ շեմայինին մոտ ինտենսիվությունների և ցածր (ջերմային կուտակային երևույթները բացառող) հերթագայման հաճախութ-

- յուների կիրառման պայմաններում բեկման ցուցի փոփոխությունը բացասական նշանի է:
- Բորոսիլիկատային ապակու ծավալում բեկման ցուցի համասեռ փոփոխմամբ հոծ փոփային կառուցվածքներ հնարավոր է պատրաստել շերտ-առ-շերտ լազերային ուղղակի գրանցման եղանակով՝ գերկարծ-իմպուսների էներգիական հոսքի, հերթագայման հաճախության և կիզակետի տեղափոխման կինեմատիկական պարամետրերի ճշգրիտ դեկավարմամբ: Հայտնաբերվել են ապակու մեջ ներգծված մակրուկոպական չափսերով և կողմնային չափսերի տրված հարաբերակցությամբ փոփային տարրերի լազերային միկրոկառուցման օպտիմալ ռեժիմներ:
  - Մոնոդոմեն նեմատիկ հեղուկբյուրեղային էլաստոմերների գծային առաձգական հատկությունները ամբողջությամբ նկարագրվում են հինգ անկախ հաստատուններ պարունակող առաձգական ազատ էներգիայի խտության միջոցով: Առաջարկվել են յոթ չափումներ նշված հինգ առաձգականության գործակիցները ծգման պարզ փորձերից որոշելու համար:
  - Ակրիլատ-ամին հիմքով մոնոդոմեն նեմատիկ հեղուկբյուրեղային էլաստոմերները բնութագրող հինգ առաձգականության գործակիցներից յուրաքանչյուրի արժեքն ընկած է 0.5-200 ՄՊա-ի տիրոպյում: Դրանք գործնականում լավ բավարարում են տրանսվերսալ-իզոտրոպ նյութի առաձգական հաստատունների արժեքների համար ձևախախտման ազատ էներգիայի խտության դրական լինելու սկզբունքից բխող տեսական սահմանափակումներին:

## Աշխատանքի ներկայացումը

Ատենախոսական աշխատանքի հիմնական արդյունքները գեկուցվել են Ultrafast Beams and Applications-2019, 2022 (Yerevan, Armenia), Optics of Liquid Crystals, OLC-2019, (Quebec, Canada), Laser Physics-2019, 2023 (Yerevan-Ashtarak, Armenia), EuroDisplay 2019 (Minsk, Belarus), Optics & its applications 2019 (Yerevan, Armenia), ինչպես նաև International Liquid Crystal Conference 2022 (Lisbon, Portugal) միջազգային գիտաժողովներում: Արդյունքները նաև ընարկվել են ԵՊՀ օպտիկայի ամբիոնի սեմինարների և ՔԵՆԴԼ ԱՀԿ երիտասարդական աշխատաժողովների ընթացքում:

## Հրապարակումները

Ատենախոսության թեմայով հրապարակվել է 13 գիտական աշխատանք՝ 5 գիտական հոդված գրախսովոր պարբերականներում և միջազգային գիտաժողովների 8 թեգիններ, որոնք բերված են սեղմագրի վերջում:

## Ատենախոսության կառուցվածքը

Ատենախոսությունն ունի հետևյալ կառուցվածքը՝ առաջարան, հապավումների ցանկ, ներածություն, երեք գլուխներ, եղանակացություն, երախտագիտություն, հավելված, օգտագործված գրականության ցանկ: Աշխատանքի ընդհանուր ծավալը 146 էջ է: Այն ներառում է 24 նկար, 7 աղյուսակ և 311 անուն գրականության ցանկ:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՍՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ


Ներածությունում հիմնավորված է ատենախոսական աշխատանքի արդիականությունը, սահմանված են աշխատանքի հիմնական նպատակներն ու խնդիրները, ներկայացված են արդյունքների կիրառական նշանակությունը, գիտական նորույթը,

ապահովանության ներկայացվող հիմնական դրույթները, ատենախոսության թեմայի շրջանակներում տպագրված աշխատանքների ցանկը:

Ատենախոսության **առաջին գիտում** ներկայացված են լազերային ուղղակի գրանցման մեթոդով բորոսիլիկատային (BK7) ապակիների ծավալում միկրոկառուցվածքների պատրաստման և հետազոտման, փուլային օպտիկական տարրերի ստացման նպատակով դրանց կիրառման ուղղությամբ աշխատանքները:

**1.1 պարագրաֆը** ներածությունն է, որտեղ բերված է համառոտ ակնարկ լազերային ուղղակի գրանցման մեթոդով թափանցիկ նյութերի միկրոմշակման արդի կիրառությունների և տեխնոլոգիական հնարավորությունների վերաբերյալ: **1.2 պարագրաֆում** նկարագրված են լազերային ուղղակի գրանցման մեթոդով սիլիկատային ապակիների միկրոմշակման առանձնահատկությունները՝ տարրեր օպտիկական տարրերի և սարքերի պատրաստման նպատակով դրանց կիրառման տեսանկյունից: Քննարկված է գերարազ պրոցեսների, տեխնոլոգիական որոշ պարամետրերի և մշակվող նյութերի ֆիզիկաքիմիական հատկությունների դերն ու ազդեցությունը մակածված կառուցվածքների վրա:

Փորձերում օգտագործվող ֆեմտոլազերային միկրոմշակման համակարգը նկարված է **1.3 պարագրաֆում**: Այն MKS Newport-ի կոմերցիոն սFAB միկրոմշակման կայանի և Amplitude Systèmes-ի ֆեմտովայրկյանային լազերային համակարգի համադրությունն է (Նկ. 1):



**Նկ. 1.** Փորձարարական համակարգի սխեմատիկ պատկերը: Ներդիրում ներկայացված է լայնական գրանցման կոնֆիգուրացիայի սխեմատիկ պատկերը:

Կառուցվածքային փոփոխությունները ստացվել են լազերային փունջը ֆոկուսացնելով 4 մմ հաստությամբ N-BK7 ապակու նմուշի ծավալում: Նմուշն ամրացվում է ծրագրային կառավարմամբ բլոկի վերին սեղանիկի վրա: Վերջինս ապահովում է 50 նմ դիրքափորման ճշգրտություն և նմուշների՝ մինչև 5 մմ/վ արագությամբ եռաչափ

շարժում 100x100x4 մմ տիրույթում: Սեղանիկների հետագիծը և էլեկտրամեխանիկական փականը համաժամ կառավարվում են XPS-100 կրնտրոլերի միջոցով, ինչը թույլ է տալիս ընտրել շարժման ռեժիմ՝ նմուշի ծավալը և/կամ մակերևույթը ընտրված հետագերով ճառագայթահարման ենթարկելու համար: Ֆոկուսացման համար օգտագործվել է NA=0.25 թվային ապերտուրայով և 10.6 մմ աշխատանքային հեռավորությամբ օրիենտիվ: Ընկրությամբ կառուցվածքների պատրաստումը իրականացվել է լայնական գրանցման ռեժիմում (Նկ. 1), երբ կառուցվածքավորումը ստացվում է նմուշը՝ լազերի տարածմանը ուղղահայաց հարթության մեջ տեղափոխելու միջոցով: Համասեր միկրոկառուցվածքների պատրաստման համար տեխնոլոգիական ռեժիմների ուսումնասիրությունն իրականացվել է Աղ. 1-ում ներկայացված պարամետրերի շրջանակում: Իմպուլսի էներգիան կառավարվել է հզորության ատենյուատորի միջոցով, որը բարեկացած է պատուղության թիթեղից և բարակթաղանթային թևեռացուցիչը: Իմպուլսի էներգիայի չափումը կատարվել է անմիջապես ֆոկուսացումից առաջ՝ PE10-C մոդելի պիրոէլեկտրական սենսորի օգնությամբ: Գերկարճ իմպուլսների տևողությունը որոշվել է ավտոկորելյացիոն ֆունկցիայի չափման միջոցով: Լազերով մակածված քծերի վրա իմպուլսի էներգիայի և սկանավորման արագության ազդեցույթունը ուսումնասիրվել է հետևյալ եղանակով: Նախ BK7 նմուշի հղված եղրի մոտ (Նկ. 1) գրանցվել են այդու երկրաչափային մի շարք կառուցվածքներ (գծեր, շղանագեցեր), այնուհետև օգտագործելով բացթողման ռեժիմում աշխատող Olympus BX51 օպտիկական մանրադիտակը՝ ուսումնասիրվել են փոխազդեցության տիրույթի՝ կողային երկրաչափության դեպքում (side view) արված պատկերները:


#### Աղ. 1. Փորձարարական պարամետրեր

Պարամետր	Արժեք
Այրի երկարություն	1030 նմ
Իմպուլսի էներգիա	0.8—10 մկՋ
Իմպուլսի տևողություն	500 ֆվ
Լազերի կրկնման հաճախություն	1 կՀց; 5 կՀց
Սկանավորման արագություն	200 մկմ/վ—1000 մկմ/վ
Կիզակետի խորություն (նմուշի մակերևույթից)	50 մկմ—2000 մկմ
Իմպուլսների էֆեկտիվ քանակ ( $N_{eff}$ )	3—65

**1.4 պարագրաֆում** քննարկված են բորոսիկատային ապակու ֆեմտոլացերային միկրոմշակման ռեժիմները՝ նկատի ունենալով գրոնականում ծավալային կառուցվածքների պատրաստման նպատակով դրանց կիրառումը:

Նկ. 2-ում ներկայացված է մակածված կառուցվածքների կախվածությունը իմպուլսի էներգիայից միավոր մակերեսի հետ փոխազդող իմպուլսների էֆեկտիվ քանակի ( $N_{eff} = 2wR/V$ , որտեղ  $R$ -ը՝ լազերի կրկնման հաճախությունը, իսկ  $V$ -ն՝ սկանավորման արագությունը, իսկ  $2w$ -ն՝ ֆոկուսացված փոխի տրամագիծն է) երկու արժեքների համար: N-BK7 ապակու ներսում ինքնակիզակետման երևույթների դրսելուման համար կրիտիկական էներգիան՝  $E_{cr}$ , 500 ֆվ տևողությամբ գործադրություն ունեցող փոխերի դեպքում 1.8-1.9 մկՋ է: Նկ. 2-ում պատկերված քծերը համապատասխանում են ինչպես կրիտիկականից վերև, այնպես էլ ներքև ընկած էներգիաների: Պատկերների համեմատությունից երևում է, որ իմպուլսների  $N_{eff}=13$  էֆեկտիվ քանակով


ճառագայթահարման և  $E_{cr}$ -ից պակաս իմայումի էներգիաների պարագայում, բժերն ունեն ծգված ծայրով էլիպտիկի ծև և դրանց բնորոշ է գրեթե համաստե (մանրադիտակի լուծողունակության սահմաններում) վերափոխություն՝ բժի ամրող երկարությամբ ԲՑՓ տեսակի (նշանի) պահպանմամբ:  $E_{cr}$ -ից բարձր էներգիաների դեպքում նկատվել են կառուցվածքային անկանոնություններ, որոնք հանդիսանում են մակածված բժի ծևի դեֆորմացիաներ և կամ տարբեր ԲՑՓ նշաններով բնութագրվող տիրույթներ: Ավելի երկարատև ճառագայթահարման դեպքում ստացվում է համանման կախվածություն էներգիայից ( $N_{eff}=65$ ), այն տարբերությամբ, որ կառուցվածքային շեղումներն սկսում են դիտվել արդեն իմայումի՝ կրիտիկական էներգիայից փոքր  $\sim 1.7$  մկ՛ էներգիաների դեպքում (Նկ. 2a): Կրիտիկական էներգիայի նման էֆեկտիվ «նվազումը»  $N_{eff}$ -ի աճին զուգընթաց որակապես բացատրվում է, հաշվի առնելով, որ հաջորդական իմայումներով ճառագայթահարման դեպքում (քանի դեռ իմայումի կրկնման հաճախությունը մեծ չէ) յուրաքանչյուր հաջորդ իմայում փոխազդում է նյութի արդեն վերափոխված (դիտարկվող դեպքում՝ նվազեցված) բեկման ցուցով տիրույթի հետ: Տրված այլկային հզորության դեպքում մակածված ոչ գծայնությունն ավելի մեծ է ավելի նոսր (ավելի փոքր գծային բեկման ցուցով) միջավայրի համար: Մակածված ոչ գծայնության աճի մեխանիզմը բացատրում է նաև բժի երկարության կախվածությունը  $N_{eff}$ -ից, որը ցուցադրված է Նկ. 2b-ում: Մասնավորապես, իմայումի փոքր էներգիաների պարագայում մակածված ոչ գծայնության էֆեկտիվ աճը  $N_{eff}$ -ի մեծ արժեքների դեպքում հանգեցնում է ֆոկուսի գերձգված հատվածից հետո գտնվող տիրույթի ընդակալմանը, որտեղ նյութի վերափոխման շեմը հաղթահարվում է շնորհիվ ինտենսիվ բազմաֆուտոնային կլանման:



**Նկ. 2.** (a) Բժի ծևի կախվածությունը լազերային իմայումի էներգիայից 5 կց կրկնման հաճախության և սկանավորման 1000 մկմ/վ ( $N_{eff}=13$ ) ու 200 մկմ/վ ( $N_{eff}=65$ ) արագությունների դեպքում: (b) Բժի տեսանելի երկարությունը՝ կախված սկանավորման արագությունից: Երկրաչափական կիզակետը նմուշի մակերևույթից  $\sim 530$  մկմ խորության վրա է: Գրանցումն իրականացվել է նմուշը չ առանցքի երկայնքով լազերի չ ուղղությանը ուղղափառ տեղափոխելով:

**Նկ. 3a-ում** ցուցադրված զուգահեռ տեղափոխման սխեմայի կիրառմամբ ուսումնասիրվել է լազերային բժի մորֆոլոգիայի կախվածությունը գրանցման խորությունից, ինչպես նաև գտնվել է բժերի օպտիմալ փոխաձեկումը երկարածված համաստե կա-

ոռոցվածքների շերտ առ շերտ պատրաստման համար: Մշակման ֆիճսված պայմաններում կառուցվածքների շարքերը գրանցվել են երկրաչափական կիզակետոր լազերի տարածման ուղղության (z) երկայնքով դիմուրնու (Δz) տեղափոխելու եղանակով: Նկ. 3b-ով պատկերված է իմպուլսի էներգիայի որոշակի արժեքներին համապատասխանող արդյունքները: Ցույց է տրված, որ երկրաչափական կիզակետի տեղափոխման Δz քայլի համապատասխան ընտրությամբ, կրիտիկականից ցածր էներգիաների դեպքում հնարավոր է ստանալ բեկման ցուցի հոծ և համաստո ձևափոխմամբ երկարածված կառուցվածքներ:




**Նկ. 3.** (a) Կառուցվածքների շարքերի պատրաստման համար կիրառվող տեղափոխման սխման; (b) բջերի շարք, ստացված տարբեր խորությունների վրա լազերի 5 կՀց կրկնման հաճախության և գրանցման տարբեր պարամետրերի դեպքում: թվերի (Δz, N) գոյգը ցույց է տալիս համապատասխան շարքում զուգահեռ տեղափոխության քայլը (Δz) և անցումների քանակը (N):

Նկ. 3b-ի #2-ից երևում է, որ մեծ պիկային հզորությամբ իմպուլսներով բավական փոքր զուգահեռ տեղափոխության քայլով շերտ առ շերտ գրանցման ժամանակ, բջի «պոչի» լայնացած լայնական կտրվածքով նորացած հատվածը «ջնջվում է» և «վերագրանցվում» է հերթափայող իմպուլսների կիզակետային բջի բարձրէներգիական հատվածով՝ բերելով փոփոխական նշանի ԲՅՓ-ով բնութագրովող տիրուպթի ձևավորմանը: Նման երևույթի դիտարկումը կրկնման հաճախության ցածր (կուտակային երևույթները բացառող) արժեքի դեպքում, ինչպես նաև BK7-ի ուղաքսացիայի մեխանիզմներում ցերմային ընդարձակման մեխանիզմի սպասելի գերակայության պայմաններում, չի բացատրվում նախկինում [6] ներկայացված մեխանիզմներով, ուստի երևույթը մնում է չպարզաբանված և կարիք ունի հետագա ուսումնահրությունների:


Ճառագայթահարման ցածր չափարարման մշակման ռեժիմների (Նկ. 3b-ի #1-ին համապատասխանող ռեժիմների) օգտագործմամբ բորոսիլիկատային ապակու ծավալում ցուցադրվել է զուգահեռանիստի տեսք ունեցող մեծ չափսերով կառուցվածքի պատրաստումը շերտ-առ-շերտ սկանավորման եղանակով (Նկ. 4): Լայնական ուղղություններով կառուցվածքի հաստության ավելացումը իրականացվել է յ առանցքի երկայնքով երկարածված համաստո #1 Նկ. 3b կառուցվածքի գրանցումը կրկնելու եղանակով: Հարակից շերտերի միջև անհրաժեշտ փոխանակմանը հասնելու համար օգտագործվել է նմուշի գերճշգրիտ դիրքավորման առկա փորձարարական հնարավորությունը: Զուգահեռանիստի՝ եզրին մոտ տարածքների ուղղաձիգ և կողա-

յին պատկերները (Նկ. 4) ցույց են տալիս վերափոխված տարրածքի բարձր (մանրա-դիտակի լուծողունակության սահմաններում) համաստոռվայրունը:



**Նկ. 4.** 4 մմ հաստությամբ BK7 նմուշի ներսում ներզգված  $600 \times 600 \times 1600$  մկմ<sup>3</sup> ծավալով գուգահեռանիստի եզրին մոտ տիրույթների ուղղաձիգ (ձախից) և կողային (աջից) պատկերները:

**1.5 պարագրաֆում** ցույց է տրված, որ համաստե կառուցվածքների պատրաստման հնարավորությունը կարելի է կիրառել որպես լազերային միկրոմշակման տրված տեխնոլոգիական ռեժիմներում բեկման ցուցի փոփոխության նշանի և արժեքի գնահատման արագ և պարզ մեթոդ: Մեթոդի իրականացման նպատակով, տվյալ ճառագայթահարման պայմաններում, պատրաստված փոփոխային կառուցվածքից ներքը և դրանից դուրս ընկած հատվածներում՝ միևնույն խորության վրա (գծերի տվյալ շարքի դեպքում դրանցից յուրաքանչյուրի համար վերցվել է շ կոորդինատի միևնույն արժեքը) գրանցվել են նույն քանակի պարզ երկաչափական կառուցվածքներ (Նկ. 5a): Լազերային բժերի շարքերի շեղման վրա գրանցման խորության ազդեցությունը հասկանալու համար գծերի շարքեր են գրանցվել նաև նմուշի ավելի խորը մասում (լազերային բժերի առաջին շարքի  $\Delta z = 30$  մկմ խորության վրա և բժերի առաջին շարքի  $y$  առանցքի երկայնքով  $\Delta y = 10$  մկմ-ով հարաբերականորեն շեղված):



**Նկ. 5.** (a) N-BK7 նմուշի ծավալում գրանցված բժերի շարքի կողային պատկերը (side-view): Կետագծերի միջոցով ընդգծված է օպտիկական ճանապարհների տարրերության պատճառով առաջացած շեղումը: (b) Լազերային փոշի՝ համաստե վերափոխված գուգահեռանիստ-կառուցվածքի միջով տարրածման սինմատիկ պատկերումը:

Միևնույն խորության վրա գրանցված լազերային բժերի վերոնշյալ շարքերի միջև դիտարկվող ծ հարաբերական շեղումը որոշվում է հետևյալ բանաձևի օգնությամբ (Նկ. 5b):

$$\delta = d \left(1 - \frac{n_2}{n_3}\right) + d \frac{n_2 n_3^2 - n_2^3 \alpha^2}{n_3^3} \frac{\alpha^2}{2}, \quad (1)$$

որտեղ  $n_2$ -ը ապակու, իսկ  $n_3$ -ը պատրաստված կառուցվածքի թեկման ցուցիչն է, ճ-ն վերջինիս հաստությունն է, ա-ն է կառուցվածքի վրա ճառագայթի անկման անկյունն է: Այստեղ՝ ազ մասի երկրորդ գումարելին երրորդ կարգի սիերիկ արերացիան է:

Օպտիկական մանրադիտության եղանակով գնահատելով ծ հարաբերական շեղումը և օգտագործելով (1)-ը՝ ցուց է տրվել, որ միկրոշակման տրված տեխնոլոգիական ուժմիտում մակաձագած վերափոխությունները հանգեցնում են թեկման ցուցիչ բացասական  $\Delta n = -9,6 \times 10^{-3}$  փոփոխության:

Գլխում ստացված հիմնական փորձարարական արդյունքները ամփոփված են **1.6 պարագրաֆում**:

**Երկրորդ գլուխը** նվիրված է նեմատիկ  $CPE$ -ների անիզոտրոպ առաձգական հատկությունների ուսումնասիրմանը: Գլխի սկզբում՝ **նախաբանում**, քննարկված են ատենախոսության տվյալ գլխում ուշադրության կենտրոնում գտնվող խնդիրները: **2.1 պարագրաֆը** ներածական է, որտեղ ներկայացված են  $CPE$ -ների առանձնահատկությունները և դրանց հեռանկարային կիրառությունների մի շարք օրինակներ: **2.2 պարագրաֆը** ներառում է հակիրճ ակնարկ  $CPE$ -ների պատրաստման տեխնոլոգիաների զարգացման պատմության վերաբերյալ: Առանձնացված են  $CPE$ -ների՝ արտաքին ազդակներով դեկավարելի օպտիկական ալիքամիջեթեղների պատրաստման համար անհրաժեշտ թիրախային բնութագրերը: Համառոտ անդրադարձ է կատարված այդ պահանջները բավարարող ակրիլատ-ամին հիմքով և ակրիլատային հիմքով օրսետիկ  $CPE$ -ների պատրաստման գործնթացներին: **2.3 պարագրաֆում** նկարագրված են  $CPE$ -ների մեխանիկական պահվածքի որոշ առանձնահատկություններ: Այստեղ հակիրճ անդրադարձել ենք  $CPE$ -ների և արտաքին ազդակների փոխազդացության արդյունքում փորձերում դիտված երևույթները բացատրելու համար առաջ քաշված նոր մոտեցումներին:


Նեմատիկ  $CPE$ -ների առաձգական բնութագրման համար կիրառված տեսական մոտեցումը ներկայացված է **2.4 պարագրաֆում**: Մոնողումն նեմատիկ  $CPE$ -ները նկարագրող ընդհանուր ազատ էներգիայի խոռոչունը գրվում է հետևյալ տեսքով՝

$$F_{tot} = \lambda_0(s_{ik})^2 + \frac{1}{2}\lambda_1(s_{ii})^2 + 2\lambda_2 n_i n_k s_{ip} s_{kp} + \lambda_3 n_i n_k s_{ik} s_{pp} + \frac{1}{2}\lambda_4 n_i n_k n_l n_m s_{ik} s_{lm} + \\ n_m(e_{kpm}\omega_p - a_{km})\left[\frac{1}{2}D_1(e_{kqr}\omega_q - a_{kr})n_r + D_2 n_i s_{ik}\right] + \frac{1}{2}K_1(\nabla \cdot \mathbf{n})^2 + \frac{1}{2}K_2(\mathbf{n} \cdot (\nabla \times \mathbf{n}))^2 + \\ \frac{1}{2}K_3(\mathbf{n} \times (\nabla \times \mathbf{n}))^2: \quad (2)$$

Այստեղ  $s_{ik}$ -ն ծևախախտման թենզորի սիմետրիկ բաղադրիչն է,  $\mathbf{n}$ -ը միավոր վեկտոր է, որին անվանում են ուղղորդ,  $a_{ik}$ -ն ծևախախտման թենզորի անտիսիմետրիկ բաղադրիչն է,  $e_{ijk}$ -ն անտիսիմետրիկ Լսի-Չիվիտայի թենզորն է, իսկ  $\omega$ -ն բնութագրում է ուղղորդի պատույթը ( $\delta\mathbf{n} = \omega \times \mathbf{n}$ ):  $\lambda_i$  գործակիցները ներառող առաջին հինգ անդամները, որոնք քառակուսային են ըստ ծևախախտման, ներկայացնում են նեմատիկ էլաստոմերի առաձգական էներգիան;  $K_1$ ,  $K_2$ ,  $K_3$  գործակիցները ներառող վերջին երեք անդամները ներկայացնում են ուղղորդի ծևախախտման նկարագրող ֆրանկի առաջական էներգիան;  $D_1$ -ը և  $D_2$ -ը նեմատիկ-պոլիմերային ցանց կազմը նկարագրող հաստատումներն են, իսկ դրանք պարունակող անդամները բնութագրում են մեխանիկական և կողմնորոշումային ծևախախտումների միջև փոխազդեցությունը:

Լարվածության թենզորի բաղադրիչները ստացվում են՝ դիֆերենցելով ընդհանուր ազատ էներգիայի խոռոչունը ըստ ծևախախտման թենզորի բաղադրիչների: Առաջ-

գալիսնույթան հինգ ( $\lambda_i$ ) գործակիցները որոշելով, և, հետևաբար, նեմատիկ էլաստո-մերների գծային առաձգական հատկությունները ամբողջությամբ բնութագրելու համար՝ դիտարկվել են ձգման երեք պարզ փորձեր, որոնք սխեմատիկորեն պատկերված են Նկ. 6-ում: Դիտարկված փորձերի դեպքում, դուրս են թերվել արտահայտություններ, որոնք կապում են  $\lambda_i$  գործակիցները փորձերում չափվող նորմալ ձևախախտումների հետ:



**Նկ. 6.** Երեք փորձերի պիսմատիկ պատկերում: Արտաքին ուժերը ազդում են շատանցքի երկայնքով՝ (a) զուգահեռ նեմատիկի ուղղորդին, (b) ուղղահայց նեմատիկի ուղղորդին: (c) Ուղղորդը շատանցքի հետ (թե՛նման ուղղություն) կազմում է  $45^\circ$  անկյուն:

Հիմնական առաձգական հաստատունների՝ Յունգի մոդուլների և Պուասոնի գործակիցների համար ստացվել են հետևյալ արտահայտությունները՝

$$\left\{ \begin{array}{l} E_{||} = \Lambda_{||}/(\lambda_0 + \lambda_1) \\ \sigma_{||} = \frac{\lambda_1 + \lambda_3}{2(\lambda_0 + \lambda_1)} \\ E_{\perp} = 4\lambda_0\Lambda_{||}/\Lambda_{\perp} \\ \sigma_{\perp x} = 2\lambda_0(\lambda_1 + \lambda_3)/\Lambda_{\perp} \\ \sigma_{\perp y} = (2\Lambda_{||} - \Lambda_{\perp})/\Lambda_{\perp} \end{array} \right. , \quad (3)$$


որտեղ  $\Lambda_{||} = 2\lambda_0^2 + 3\lambda_0\lambda_1 + 4\lambda_0\lambda_2 + 4\lambda_1\lambda_2 + 2\lambda_0\lambda_3 - \lambda_3^2 + \lambda_0\lambda_4 + \lambda_1\lambda_4$ ,  $\Lambda_{\perp} = 4\lambda_0^2 + 4\lambda_0\lambda_1 + 8\lambda_0\lambda_2 + 4\lambda_1\lambda_2 + 4\lambda_0\lambda_3 - \lambda_3^2 + 2\lambda_0\lambda_4 + \lambda_1\lambda_4$ :

**2.5 պարագրաֆում** նկարագրված է մոտեցման կիրառումը ակրիլատ-ամին հիմքով main-chain (Եթե մեզոգենները ներառված են այլիների հիմնական շղթայի նեմատիկ  $<\!P\!E\!>$ -ների համար: Մասնավորապես, 2.5.1 Ենթապարագրաֆում մոտեցումը կիրառվել է ազդեցնողով ֆունկցիոնալացված ակրիլատ-ամին հիմքով նեմատիկ  $<\!P\!E\!>$ -ները բնութագրելու համար: Գործակիցների գնահատման համար անհրաժեշտ փորձարարական տվյալները վերցվել են [7] աշխատանքից: Փոքր ձևախախտումների տիրույթում կատարված փորձերի տվյալների հիման վրա երեք տարրեր նմուշների համար հաշվարկվել են առաձգական ազատ էներգիայի խոռոչյան արտահայտության մեջ մտնող առաձգականության հինգ գործակիցները: Աղ. 2-ում ներկայացված են այլ նմուշների կառուցվածքը և գործակիցների համար ստացված արդյունքները:

**Աղ. 2.** Նեմատիկ  $<\!P\!E\!>$  նմուշների կառուցվածքը և հաշվարկների արդյունքները:


Նմուշ	Մոլային կազմ		Գործակիցներ (ՄՊա)				
	Ակրիլ/ Ամին	2Ազր/Ընթիանուր ռեակտիվ սյութեր	$\lambda_0$	$\lambda_1$	$\lambda_2$	$\lambda_3$	$\lambda_4$
1	1.1	1	2.51	197.5	0.8	2.51	55.5
2	1.1	2	2	42.6	1.1	1.9	41.4
3	1.1	4	2.2	199.7	0.5	2.3	46.4

**2.5.2 Ենթապարագրաֆում** ցուցադրված է մոտեցման կիրառումը ալղիլատոյին հիմքով օբյետիկ ՀԲԷ-ների համար: Նմուշի պատրաստման գործընթացը համապարփակ կերպով ներկայացված է [8] աշխատանքում: Զգման երեք փորձերն իրականացվել են պարզ փորձարարական համակարգի կիրառմամբ (տե՛ս նկ. 7), որը թույլ է տալիս օպտիկական եղանակով միաժամանակ որոշել երկու փոխուղղահայաց ուղղություններով ձևախախտումները, իսկ մյուս ուղղությամբ (նմուշի հաստության երկայնքով) ձևախախտումը որոշվել է՝ կիրառելով ծավալի պահպանման պայմանը: Փորձերի համար օգտագործվել են 1 սմ կողմով, 110 մլմ հաստությամբ քառակուսիաձև նմուշներ: Լարման կիրառումը այս փորձերում իրականացվել է փոփոխական քաշով բերի օգտագործմամբ: Ձևախախտման չափման համար, յուրաքանչյուր լարման արժեքի դեպքում, լարման կիրառումից 30 վ հետո թվային մանրադիտակի միջոցով ֆիքսվել է նմուշի պատկերը: Բոլոր փորձերն իրականացվել են փոքր ձևախախտումների տիրույթում (չափված ձևախախտումները 0-10% տիրույթում են):



**Նկ. 7.** Փորձարարական համակարգի սխեմատիկ պատկերը:

**Նկ. 8-ում** ցուցադրված են այս ՀԲԷ նմուշների համար փորձերից ստացված ձևախախտում-լարում տվյալները:



**Նկ. 8.** Զգման երեք փորձերի համար երեք փոփոխահայաց ուղղություններով ձևախախտումներում լարումից:

Ստացված փորձարարական տվյալների օգտագործմամբ հաշվարկվել են առաջական ազատ էներգիայի խտության արտահայտության մեջ մտնող  $\lambda_i$  գործակիցները դիտարկվող նմուշի համար: Այդ գործակիցների համար ստացված արժեքները ներկայացված են Աղ. 3-ում:

**Աղ. 3.** Գործակիցների արժեքները ակրիլատոյին հիմքով օբյետիկ ՀԲԷ նմուշի համար:

$\lambda_0(\text{ՄՊա})$	$\lambda_1(\text{ՄՊա})$	$\lambda_2(\text{ՄՊա})$	$\lambda_3(\text{ՄՊա})$	$\lambda_4(\text{ՄՊա})$
0.572	15.042	-0.11	-0.052	8.23

Ցույց է տրվել, որ լայնական իզոտրոպ նյութերի համաչափությունից բխող տեսական սահմանափակումները բավական լավ բավարարվում են փորձարարա-

կան եղանակով չափված առաջգական հաստատունների համար: Աղ. 2-ի և 3-ի համեմատությունից երևում է, որ իինք գործակիցների արժեքները ավելի մեծ են main-chain ՀԲՀ-ների համար, ինչը պայմանավորված է վերջիններին դեպքում նեմատիկ-պոլիմերային ցանց ավելի ուժեղ կապով: **2.6 պարագրաֆում** ամփոփված են երկրորդ գլխում ներառված աշխատանքների հիմնական արդյունքները:

**Երրորդ գլխի** սկզբում բերված է նախարան, որտեղ համառոտ նկարագրված են գլխում ներառված աշխատանքները և հիմնավորված է դրանց արդիականությունը:

**Երրորդ գլխի** առաջին մասը՝ **3.1 պարագրաֆը**, նկիրված է ԹՓ-ի ամփոփուրով մեխանիկական հատկությունների բնույթագրմանը: **3.1.1 Ենթապարագրաֆը** ներածական է, որտեղ համառոտ անդրադարձ է կատարված ԹՓ-ների պատրաստման տեխնոլոգիաներին և դրանց որոշ կիրառություններին: **3.1.2 Ենթապարագրաֆում** նկարագրված է երկրորդ գլխում քննարկված մոտեցման կիրառումը ԹՓ-ների նմուշների համար: Այստեղ ԹՓ-ի մեխանիկական հատկությունները մոդելավորվել են՝ օգտագործելով լայնական հղուորոպության ենթադրությունը:

Թափանցիկ փայտերը բավական նոր նյութեր են և փորձերի հասանելի տվյալները բավարար չեն առաջգական ազատ էներգիայի արտահայտության մեջ մտնող բոլոր իինք գործակիցները գնահատելու համար: Որոշ բացակայող տվյալներ հաշվարկվել են միկրոմեխանիկանան մոդելների կիրառմամբ: Մասնավորապես, բալսայի հիման վրա պատրաստված ԹՓ-ի նմուշի համար, օգտագործելով փորձերից ստացված արդյունքները [9] և կիրառելով ֆենոմենոգիական (խառնուրդի և հակադարձ խառնուրդի կանոնները) և կիսաէմպիրիկ միկրոմեխանիկական մոդելներ (Զամիսի մոդելը), հաշվարկվել են առաջգականության գործակիցների գնահատման համար անհրաժեշտ Պուասոնի գործակիցները: Դիտարկվող ԹՓ նմուշի հիմնական առաջգական հաստատունների համար փորձերից և միկրոմեխանիկական մոդելների կիրառմամբ ստացված արժեքները ամփոփված են Աղ. 4-ում:

**Աղ. 4.** Բալսայի հիման վրա պատրաստված ԹՓ-ի հիմնական առաջգական հաստատուններ:

Նյութի անուն	Փայտի տեսակ	Պատրաստման մեթոդ	$E_{\parallel}$ (Գ-Պա)	$E_{\perp}$ (Գ-Պա)	$\sigma_{\perp y}^{uw}$ (-)	$\sigma_{\perp y}^p$ (-)	$\sigma_{\parallel y}^q$ (-)
PMMA TW Veneer	Բալսա	NaClO <sub>2</sub>	4.3	2.4	0.343	0.323	0.3464

$\sigma_{\perp y}^{uw}$  – հաշվարկված է հակադարձ խառնուրդի կանոնի կիրառմամբ,  $\sigma_{\perp y}^p$  – հաշվարկված է Զամիսի մոդելի կիրառմամբ,  $\sigma_{\parallel y}^q$  – հաշվարկված է խառնուրդի կանոնի կիրառմամբ:

Աղ. 4-ում ներկայացված տվյալների օգտագործմամբ բալսայի հիման վրա պատրաստված ԹՓ-ի նմուշի համար գնահատվել են առաջգականության  $\lambda_0$ ,  $\lambda_1$ ,  $\lambda_3$  գործակիցները և  $\lambda = 4\lambda_2 + \lambda_4$ -ը: Աղ. 5-ում ներկայացված են վերոնշյալ առաջգականության գործակիցների համար հաշվարկված արժեքները:

**Աղ. 5.** Գործակիցների արժեքները բալսայի հիման վրա պատրաստված ԹՓ-ի նմուշի համար:

Նմուշ	Կիրառված մոդելներ	Գործակիցներ (Գ-Պա)			
		$\lambda_0$	$\lambda_1$	$\lambda_3$	$\lambda$
PMMA TW Veneer	Ֆենոմենոգիական	0.8935	1.4	0.189	1.836
PMMA TW Veneer	Զամիսի կիսաէմպիրիկ	0.907	1.3	0.228	1.787


**3.1.3 Ենթապարագրաֆը** ամփոփում է տվյալ գլխի առաջին մասում ստացված արդյունքները:

**Երրորդ գլուխ** երկրորդ մասում **3.2 պարագրաֆում**, քննարկված են հետազոտված անհղուրոպությամբ մակրոսկոպական միջավայրերի և դրանց հիման վրա պատրաստված տարրերի օպտիկական հատկությունների բնույթագրման եղանակներ: Մասնավորապես, **3.2.1 Ենթապարագրաֆում** նկարագրված են ըստուացման վիճակի նկարագրության մի շարք գործիքներ՝ Զոնսի և Մյովերի մատրիցական ֆորմալիզմները, Պուանկարեի գնդոլորտը: **3.2.2 Ենթապարագրաֆում** պարզ օրինակների դիտարկմամբ քննարկված է լուսի տարածումը համաստե անհղուրոտու կառուցվածքներով: Զոնսի մատրիցական մեթոդի կիրառումը միջավայրի օպտիկական հատկությունների բնույթագրման համար ցուցադրված է **3.2.3 Ենթապարագրաֆում** մասնավոր օրինակի՝ ուսակտիվ մեղոգեններով ձևավորված արդումատիկ ցիկլոիդային դիֆրակտային ալիքաթիթեղի (ՑԴԱ) դիտարկմամբ: Ենթապարագրաֆի սկզբում հակիրծ ներկայացված են հեղուկբյութեղային դիֆրակտային ալիքաթիթեղների որոշ առանձնահատկություններ: Այնուհետև քննարկված են ՑԴԱ-ների հատկությունները և նկարագրված են ՑԴԱ-ներից պատրաստված բազմաշերտ ծածկույթները:

Հակառակ թվիստի նշանով երկու քիրալ ՑԴԱ-ներից բաղկացած արդումատիկ ՑԴԱ-ի Զոնսի մատրիցը ստացվում է՝ պարզապես բազմապատկերով մաս կազմող թվիստով ՑԴԱ-ների Զոնսի մատրիցները: Թվիստով ՑԴԱ-ի Զոնսի մատրիցը որոշվում է՝ այն ներկայացնելով որպես բազմաթիվ բարակ ՑԴԱ-ների շերտերից կազմված համակարգ, ընդ որում յուրաքանչյուր շերտ մյուսի նկատմամբ ունի փոքր ազիմուտային փուլային շեղում: Արդյունքում, ստացվում են անալիտիկ արտահայտություններ արդումատիկ ՑԴԱ-ի դիֆրակտային հատկությունների համար: Թվային գնահատականները ցոյց են տալիս, որ թվիստ կողմնորոշված արդումատիկ ալիքաթիթեղները առանձին ՑԴԱ-ների համեմատությամբ ունեն բարելավված օպտիկական բնույթագրեր (առավելագույն դիֆրակտային գոտու լայնությունը ավելի քան վեց անգամ գերազանցում է առանձին ՑԴԱ-ի դիֆրակտային գոտու լայնությանը). Նման ալիքաթիթեղներին բնութագրական է բարձր դիֆրակտային էֆեկտիվություն տեսանելի ալիքային երկարությունների գորեթ ամրոց տիրույթում: **3.2.4 Ենթապարագրաֆում** ներկայացված է Երրորդ գլուխ երկրորդ մասի ամփոփումը:

**Հավելված Ա-ում** տեսականորեն ուսումնասիրվել է տեղայնացված էլեկտրական դաշտի ազդեցությամբ մակաձևած հիդրոդինամիկական երևոյթ նեմատիկներում պայմանավորված էֆեկտիվ մոլեկուլային ծավալի կրճատմամբ: **ԱԱ պարագրաֆում** ներկայացված են աշխատանքի շարժադիրները, կարևորությունը և կապը ատենախոսության մեջ ներառված մյուս աշխատանքների հետ: **ԱԲ պարագրաֆը** ներածական է, որտեղ համառոտ անդրադարձ է կատարված նեմատիկներում հիդրոդինամիկական շարժումներ մակաձելու եղանակներին և հոսքի առաջացման մեխանիզմներին: Այնուհետև համառոտ քննարկված է աշխատանքում հետազոտվող մեխանիզմը: Փորձերում դիտարկված հեղուկբյութեղային բջջի սխեմատիկ պատկերը ներկայացված է Նկ. 9-ում: Բջջային պարունակում է հոմեոտրոպ կողմնորոշում ունեցող նեմատիկ հեղուկ բյութեղ (ՆՀԲ): Էլեկտրական պոտենցիալը կիրառվում է բջջի աջ մասում: Արդյունքում, այն հատվածում, որտեղ կիրառված է դաշտը, ունենք կողմնորոշման ավելի բարձր աստիճան և, հետևաբար, մոլեկուլների գրադեցրած էֆեկտիվ ծավալի նվազում: Ճնշման գրադիենտը, որն այս դեպքում առաջանում է տեղային դիէլեկտրի-

կալկան մոմենտի ազդեցությամբ էֆեկտիվ մոլեկուլային ծավալի նվազման հետևանքով, հանգեցնում է ՆՀԲ-ի հոսքի: Առաջացած տեղային ծավալի փոփոխությունների գնահատումը՝ երևութաբանական մոտեցման կիրառմամբ ներկայացված է **ԱՊ պարագրաֆում:**



Տարածականորեն ոչ համասեռ էլեկտրական դաշտի կիրառման հետևանքով առաջացած տեղային ծավալի փոփոխության արագությունը գնահատվել է՝ օգտագործելով [10] աշխատանքում զարգացրած մոտեցումը և ենթադրելով, որ դաշտի ( $E$ ) չափավոր արժեքների համար կարգավորվածության աստիճանի կախվածությունը էլեկտրական դաշտից գծային է: Ծավալի փոփոխության արագության համար ստացվել է հետևյալը՝

$$\frac{\partial V}{\partial t} \approx \frac{\Delta V}{\tau} = -6V_0 S_0 \left( \frac{R_{\perp}}{\frac{R_{\perp}}{R_{\parallel}} + 2} \right)^2 \frac{aE}{\tau}, \quad (4)$$

որտեղ  $a$ -ն գծային կախվածության գործակիցն է,  $V_0$ -ն ծավալն է իզոտրոպ փուլում,  $S_0$ -ն կարգավորվածության աստիճանն է դաշտի բացակայության պայմաններում,  $R_{\parallel}/R_{\perp}$ -ը մոլեկուլի երկարության և լայնության հարաբերակցությունն է, իսկ  $\tau$ -ով նշանակված է ծավալի կրճատման արոցեսը բնութագրող ժամանակը:

Փորձերում դիտվող հիդրոֆիլական երևույթները նկարագրելու համար կառուցվել են հետազոտվող համակարգը նկարագրող հավասարումները (Նավի-Մթոքսի հավասարումը և անսեղմելիության պայմանը): Նշանակած հավասարումները լուծվել են ստացիոնար դեպքում և գնահատվել է ծավալի նվազմամբ մակածված հոսքի ստացիոնար արագությունը: Վերջինս առավելագույնն է բարձր միջին հարթության մեջ, և դրա համար ստացվել է հետևյալը՝

$$v \left( \frac{d}{2} \right) \approx -\frac{6}{ld^3} \frac{\Delta V}{\Delta t} \left( \frac{d^2}{4} - \frac{d^2}{2} \right) = \frac{24\pi R_0^2}{h} N \frac{S_0 a E}{\tau l d}, \quad (5)$$

որտեղ  $l$ -ը բարձր լայնությունն է,  $R_0$ -ն կոչու սբերայի էֆեկտիվ շառավիղը,  $h$ -ը «իաթեթավորման» ֆրակցիան է (packing fraction), որը հավասար է մասնիկների զբաղեցրած ծավալի և ընդհանուր ծավալի հարաբերությանը, իսկ  $N$ -ը մոլեկուլների թիվն է: **ԱՊ պարագրաֆում,** [11] աշխատանքի փորձարարական տվյալների կիրառմամբ, գնահատվել է հոսքի ստացիոնար արագությունը: Ստացված արդյունքները համեմատվել են առկա փորձարարական արդյունքների հետ: **ԱՅ պարագրաֆը** ներառում է եղակացություններ և հետագա քայլերի համառոտ նկարագրություն:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ստորև թվարկված են ատենախոսության մեջ ներառված աշխատանքների հիմնական գիտական արդյունքները՝

**Նկ. 9.** Դիտարկվող բարձր սխեմատիկ պատկերը: Այստեղ  $L$ -ը բարձր երկարությունն է,  $d$ -ն երկու տակդիրների միջև հեռավորությունն է:

1. Օպտիկական մանրադիտության ուսումնասիրություններով ցոյց է տրվել, որ գերկարճ լազերային իմպուլսներով N-BK7 ապակու ծավալում մակածված նյութի վերափոխությունը շեմայինին մոտ ինտենսիվությունների և ցածր հերթագայման հաճախությունների կիրառման պայմաններում հանգեցնում է բեկման ցուցչի հոծ ծևափոխման, իսկ բարձր պիկային հզորությունների դեպքում և/կամ երկարաւու ճառագայթահարման պայմաններում լազերային իմպուլսներով մակածված բժերն ունեն փոփոխական նշանի ԲՅՓ-ով ընտրագրվող անհամասեռ կառուցվածք:
2. Ցոյց է տրվել, որ ճառագայթահարման ցածր էներգիական չափաբաժնների դեպքում հնարավոր է ընտրել միկրոմշակման տեխնոլոգիական ուժիներ (սկանավորման արագություն, իմպուլսների հերթագայման հաճախություն), որոնք թույլ են տալիս շերտ-առ-շերտ սկանավորման եղանակով պատրաստել ապակու բեկման ցուցչի հոծ և համասեռ ծևափոխմամբ երկարածված կառուցվածքներ: Առաջարկվող մուտեցման կիրառելիությունը ցուցադրվել է N-BK7 ապակու ծավալում ընկրոմված, մեծ չափսեր ունեցող, համասեռ փոլային կառուցվածքի պատրաստմամբ:
3. Օգտագործելով մեծ չափսերով, բեկման ցուցչի համասեռ փոփոխմամբ ընկրոմված փոլային կառուցվածքների *in situ* պատրաստման կարողությունը՝ առաջարկվել է թափանցիկ նյութերի ծավալում լազերային իմպուլսներով մակածված բեկման ցուցչի փոփոխության նշանի և արժեքի գնահատման արագությունը: Ցոյց է տրվել, որ միկրոմշակման տրված տեխնոլոգիական ուժինում սուբակտիվայրկանային լազերով N-BK7 ապակու ծավալում մակածված նյութի վերափոխությունները հանգեցնում են բեկման ցուցչի բացասական ( $\Delta n = -9,6 \times 10^{-3}$ ) փոփոխության:
4. Ցոյց է տրվել, որ մոնոդրոմեն նեմատիկ հեղուկրյուրեղային էլաստոմերների առաջական հատկությունները տեսականորեն նկարագրվում են հինգ անկախ հաստատություններ պարունակող առածքական ազատ էներգիայի խտության միջոցով: Նշված հինգ առածքականության գործակիցների որոշման համար առաջարկվել են ձգման պարզ փորձեր:
5. Առաջարկվող տեսական մոդելի կիրառմամբ առաջին անգամ առածքականության հինգ հաստատությունները գնահատվել են ազորենտենով ֆունկցիոնալացված ակրիլատ-ամին հիմքով նեմատիկ հեղուկրյուրեղային էլաստոմերների համար՝ օգտագործելով հասանելի փորձարարական տվյալները: Նշված հեղուկրյուրեղային էլաստոմերները բնութագրող հինգ առածքականության գործակիցներից յուրաքանչյուրի արժեքն ընկած է  $0.5\text{--}200$  ՄՊա-ի տիրույթում: Ցոյց է տրվել, որ փորձերից ստացված արժեքները գործնականում լավ բավարարում են առածքական հաստատությունների արժեքների համար նյութերի համաչափությամբ պայմանավորված տեսական սահմանափակումներին:

### Գրականություն

1. R. Gattass, E. Mazur. *Nature Photonics* 2, 219–225, 2008.
2. F. Sima, et al. *Nanophotonics*, vol. 7, no. 3, 2018, pp. 613-634.
3. C. P. Jisha, et al. *Laser & Photonics Reviews* 15, 2100003, 2021.
4. A. E. Minovich, et al. *Laser & Photonics Reviews*, 9: 195-213, 2015.
5. Y. Li, et al. *Adv. Opt. Mater.* 2018, 6, 1800059.

- A. Mermilliod-Blondin, et al. *Phys. Rev. B* 77, 104205, 2008.
- S.W. Oh, et al. *Liquid Crystals* 2020, 48:4, 511-520.
- Z. Wang, T. Raistrick, et al. *Materials* 16, 393, 2023.
- Q. Fu, et al. *Compos. Sci. Technol.* 2018, 164, 296–303.
- P.Palffy-muhoray, D.A. Balzarini, D.A. Dunmur. *Mol. Cryst. Liq. Cryst.* 1984, 110, 315–330.
- T.Dadalyan, T.Galstian. *Sci. Rep.* 2019, 9, 12346.

### Հրապարակված աշխատանքների ցուցակ

#### Գիտական հոդվածներ

- Sargsyan M.**, Gevorgyan G., Hakobyan M., Hakobyan R. Determination of the Elasticity Coefficients for Nematic Liquid Crystal Elastomers, *Crystals* (Q2) 2022, 12(11):1654.
- Sargsyan M.** Electrically Induced Hydrodynamic Effect in Nematics Caused by Volume Reduction, *Fluids* (Q2) 2022, 7(10):316.
- Hovakimyan M.T., **Sargsyan M. L.**, Hakobyan R. S., Hakobyan M. R. Elastic properties of solid nematics, Proceedings of Optics of Liquid Crystals 2019 (OLC-2019), *Molecular Crystals and Liquid Crystals* (Q3) 2020, 713:1, 55-64.
- Yeremyan A.S., **Sargsyan M.L.**, Gasparyan P.K. Fabrication of Uniform Phase Structures in the Bulk of a N-BK7 Glass Using Ultrashort Laser Pulses, *J. Contemp. Phys.* (Q3) 2020, 55, 191–198.
- Sargsyan M.L., Hakobyan M.R., Hakobyan R.S. Multilayer Anisotropic Thin Film with a Twist, *Armenian Journal of Physics* 2020, 13 (1), 20-30.

#### Միջազգային գիտաժողովների թեզիսներ

- Sargsyan M.**, Gevorgyan G., Hakobyan M., Hakobyan R., Reynolds M., Gleeson H., Anisotropic Elastomers for Laser Beam Steering, Book of Abstracts of Laser Physics 2023, Ashtarak, Armenia, p. 72.
- Sargsyan M.**, The Effect of Ultrashort Pulse Shaping on Regimes of Laser Processing of a Glass. The 3<sup>rd</sup> International Workshop on “Ultrafast Beams and Applications” (UBA-22), Yerevan, Armenia.
- Sargsyan M.L.**, Gevorgyan G.S., Hakobyan M.R., Hakobyan R.S., Anisotropic Elastic Properties of Nematic Liquid Crystal Elastomers. 28<sup>th</sup> International Liquid Crystal Conference (ILCC 2022), Lisbon, Portugal.
- Hovakimyan M.T., **Sargsyan M.L.**, Hakobyan R.S., Hakobyan M.R., Anisotropic Elastic Properties of Liquid-Crystalline Elastomers, Book of Abstracts of Optics-2019, Yerevan, Armenia, p. 105.
- Sargsyan M.L.**, Yeremyan A. S., Direct laser writing of buried phase structures in BK7 glass, Book of Abstracts of Laser Physics 2019, Ashtarak, Armenia, p.33.
- Hovakimyan M.T., **Sargsyan M.L.**, Hakobyan M.R., Hakobyan R.S., Elastic properties of anisotropic elastomers, Book of Abstracts of International conference "EuroDisplay 2019", Minsk, Belarus, p. 97.
- M.T.Hovakimyan, **M.L.Sargsyan**, M.R.Hakobyan, R.S.Hakobyan, Elastic Properties of Solid Nematics. 18<sup>th</sup> Topical Meeting on the Optics of Liquid Crystals (OLC-2019), p. 25, Hotel Chateau Laurier, Quebec City, Canada.
- Sargsyan M.**, Ultrafast laser-induced modification of glass and fabrication of buried phase structures, Abstracts of UBA-19, Yerevan, Armenia, p. 25.

## САРГСЯН МАКСИМ

# ИССЛЕДОВАНИЕ МЕХАНИЧЕСКИХ И ОПТИЧЕСКИХ СВОЙСТВ СТРУКТУР, СФОРМИРОВАННЫХ В ИЗОТРОПНЫХ И АНИЗОТРОПНЫХ СРЕДАХ

## АННОТАЦИЯ

В диссертационной работе представлены теоретические и экспериментальные результаты, которые могут внести вклад в разработку средств управления световыми пучками, что является одной из актуальных задач в области фотоники, способствующей проектированию и изготовлению компактных и эффективных оптических устройств с управляемыми характеристиками.

Метод прямой лазерной записи (ПЛЗ) является одним из наиболее перспективных методов изготовления оптических элементов в объеме изотропных прозрачных сред (к примеру, в стекле). В настоящее время область применения метода стремительно расширяется благодаря новейшим технологическим разработкам, в результате чего стали доступны сверхбыстрые (фемтосекундные) лазерные системы микрообработки, обладающие возможностью точного управления технологическими параметрами и широким выбором режимов обработки. Однако из-за характерного недостатка рассматриваемого метода ПЛЗ, связанного с пространственной неоднородностью области структурирования, возникают значительные трудности при необходимости записи протяженных (с высоким соотношением продольных и поперечных размеров) структур или фазовых элементов с большими размерами.

Жидкокристаллические эластомеры (ЖКЭ) представляют интерес для создания оптических элементов с контролируемыми характеристиками на основе анизотропных сред. Последние благодаря своим свойствам (в частности, они обладают оптической анизотропией, управляемой внешними полями, возможностью программирования и перепрограммирования распределения директора) позволяют изготавливать оптические элементы, управляемые дополнительными способами (например, механически, путем изменения температуры). Особый интерес вызывает дизайн и разработка механически управляемых устройств на основе ЖКЭ. Однако создание таких устройств до сих пор остается сложной задачей. В основном это связано с тем, что механические свойства этих материалов еще не полностью характеризованы, что существенно затрудняет правильный дизайн таких устройств и их интеграцию в другие системы.

Основной целью диссертационной работы является исследование модификаций, индуцированных сверхкороткими лазерными импульсами в объеме боросиликатного стекла, и их применение для получения однородных макроскопических фазовых структур с сплошным изменением показателя преломления. А также теоретически и экспериментально провести полную характеристику анизотропных упругих свойств монодоменных нематических жидкокристаллических эластомеров.

Основные результаты диссертационной работы приведены ниже:

1. На основе микроскопических исследований было показано, что модификация вещества, индуцированная ультракороткими лазерными импульсами в объеме

- стекла N-BK7 при условиях применения околопороговых интенсивностей и низких частот повторения, приводит к сплошному изменению показателя преломления, а при высоких пиковых мощностях и/или в условиях длительной экспозиции лазерно-индуцированные треки имеют неоднородную структуру, характеризующуюся переменным знаком изменения показателя преломления.
2. Было показано, что при малых энергетических дозах облучения можно выбрать технологические режимы микрообработки (скорость сканирования, частота следования импульсов), позволяющие методом послойного сканирования изготавливать протяженные структуры с сплошным и однородным изменением показателя преломления стекла. Применимость предложенного подхода была продемонстрирована изготовлением однородной фазовой структуры большого размера, заглубленной в объем стекла N-BK7.
  3. Используя возможность *in situ* изготовления заглубленных фазовых структур больших размеров с однородным изменением показателя преломления, предложен быстрый и простой метод оценки знака и величины изменения показателя преломления, индуцированного лазерными импульсами в объеме прозрачных материалов. Было показано, что в данном технологическом режиме микрообработки, модификации вещества, индуцированные субпикосекундными лазерными импульсами в объеме стекла N-BK7, приводят к отрицательному ( $\Delta n = -9.6 \times 10^{-3}$ ) изменению показателя преломления.
  4. Было показано, что упругие свойства монодоменных нематических жидкокристаллических эластомеров теоретически описываются плотностью упругой свободной энергии, содержащей пять независимых констант. Простые эксперименты на растяжение были предложены для определения упомянутых пяти коэффициентов упругости.
  5. С использованием предложенной теоретической модели на основе доступных экспериментальных данных пять коэффициентов упругости впервые были оценены для функционализированных азобензолом нематических жидкокристаллических эластомеров на основе акрилат-аминов. Значение каждого из пяти коэффициентов упругости, характеризующих упомянутые жидкокристаллические эластомеры, находится в диапазоне 0.5-200 МПа. Было показано, что полученные из экспериментов значения хорошо удовлетворяют теоретическим ограничениям на величины упругих констант, обусловленных симметрией материалов.

STUDY OF MECHANICAL AND OPTICAL PROPERTIES OF STRUCTURES FORMED IN  
ISOTROPIC AND ANISOTROPIC MEDIA

ANNOTATION

In this thesis, both theoretical and experimental findings are presented, that can contribute to the advancement of light control tools, which is one of the current challenges in the field of photonics. The results obtained can assist in the design and fabrication of compact and efficient optical devices with tunable characteristics.

Direct laser writing (DLW) stands out as one of the most promising techniques for fabricating optical elements in the volume of isotropic transparent media (such as glass). Currently, the scope of applications of the method is rapidly expanding due to the latest technological advancements, resulting in the availability of ultrafast (femtosecond) laser micromachining systems that offer precise control over technological parameters and a wide choice of processing regimes. However, the characteristic drawback of the DLW method, related to the spatial inhomogeneity of the structuring region, causes significant challenges when it is necessary to write extended (high-aspect ratio) structures or phase elements with large sizes.

Liquid crystalline elastomers (LCEs) are of particular interest for creating optical elements with adjustable characteristics based on anisotropic media. Their distinctive properties (including controllable optical anisotropy through external fields, and the ability of programming and reprogramming the director distribution), enable the creation of optical elements that can be controlled in additional methods (e.g., mechanically, or by changing the temperature). The design and fabrication of mechanically controlled devices based on LCEs is of particular interest. However, the creation of such devices remains challenging. Primarily, this is due to the fact that the mechanical properties of these materials have not yet been fully characterized, which significantly complicates the proper design of such devices and their integration into other systems.

The primary aim of this thesis is twofold: first, to investigate the modifications induced by ultrashort laser pulses in the volume of borosilicate glass and their application for fabrication of homogenous macroscopic phase structures with continuous refractive index change. Second, theoretically and experimentally perform the full characterization of anisotropic elastic properties of monodomain nematic liquid crystal elastomers.

The main results of the thesis are presented below:

1. Based on optical microscopic studies, it was shown that the modification of the material induced by ultrashort laser pulses in the volume of N-BK7 glass at application of near-threshold intensities and low repetition rates leads to a continuous change in the refractive index, while at high peak powers and/or under

conditions of long-term irradiation the laser-induced tracks have a non-uniform structure characterized by a variable sign of the refractive index change.

2. It was shown that at low energy doses of irradiation it is possible to choose specific technological regimes of micromachining (scanning speed, pulse repetition rate) that allow fabrication of extended structures within the glass using the layer-by-layer scanning approach, resulting in a smooth and homogeneous change in the refractive index. The applicability of the proposed approach was demonstrated by fabrication of a large-size homogeneous phase structure buried in the volume of N-BK7 glass.
3. Using the possibility of in situ fabrication of buried phase structures of large sizes with smooth and uniform refractive index change, an express and simple method for the estimation of the sign and magnitude of the refractive index change induced by laser pulses in the volume of transparent materials has been proposed. The research demonstrated that in the given technological regimes of micromachining, the material modifications induced by sub-picosecond laser pulses in the volume of N-BK7 glass result in a negative change ( $\Delta n = -9.6 \times 10^{-3}$ ) in the refractive index.
4. It has been shown that the elastic properties of monodomain nematic liquid crystal elastomers are theoretically described by an elastic free energy density containing five independent constants. Simple tensile experiments were proposed to determine the mentioned five elastic coefficients.
5. Using the proposed theoretical model and based on available experimental data, five elasticity coefficients were estimated for the first time for azobenzene functionalized acrylate-amine-based nematic liquid crystalline elastomers. The value of each of the five elasticity coefficients characterizing the mentioned liquid crystalline elastomers is in the range of 0.5-200 MPa. It was shown that the values obtained from the experiments satisfy well the theoretical constraints on the values of elastic constants imposed by the material's symmetry.

